ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱԼՄԱԹԻ (ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **Անունը, ազգանունը.**

  Արմինե Ալավերդյան

- **Զբաղեցրած պաշտոնը.**

  ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

- **Գործուղման վայրը և ժամկետները.**

  Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն, 2024 թվականի հոկտեմբերի 7-ից 11-ը

- **Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողով

- **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի համար ապացույցների վրա հիմնված կամավոր ազգային զեկույցների վերաբերյալ աշխատաժողովին (2024 թ. հոկտեմբերի 8-ին) և Կայուն զարգացման նպատակների իրականացման Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի բազմակողմ ութերորդ ֆորումին (2024 թ. հոկտեմբերի 9-10-ը):

- **Քննարկված թեմաները.**

Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի համար ապացույցների վրա հիմնված կամավոր ազգային զեկույցների վերաբերյալ աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Կամավոր ազգային զեկույցների պատրաստման գործընթացը և հաշվետվողականությունը. կամավոր ազգային զեկույցներ ներկայացրած երկրների փորձը, գրանցած հաջողություններն ու արձանագրված խնդիրները,

- Կայուն զարգացման նպատակների շրջանակում գրանցած առաջընթացի գնահատման երկրների փորձը. նոր գործիքակազմեր, գնահատման մեխանիզմներ,

- Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և հաշվետվողականության ապահովման գործընթացների կիրառում՝ երկրների փորձը հետևողական և համապարփակ քաղաքականությունների մշակման ու բազմակողմ մոտեցումների կիրառման համատեքստում:

Կայուն զարգացման նպատակների իրականացման ութերորդ Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի բազմակողմ ֆորումին քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) կայուն և ներառական իրականացման խթանում,

- ԿԶՆ 8 «Նպաստել կայուն, ներառական և կայուն տնտեսական աճին, լիարժեք և արդյունավետ զբաղվածությանը և արժանապատիվ աշխատանքին բոլորի համար,

- ԿԶՆ 3 «Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցությունը բոլորի համար՝ բոլոր տարիքային խմբերում»,

- ԿԶՆ 5 «Հասնել գենդերային հավասարությանը և հզորացնել բոլոր կանանց և աղջիկներին»,

- ԿԶՆ 14 «Պահպանել և նպատակային օգտագործել օվկիանոսները, ծովերը և ծովային ռեսուրսները»,

- ԿԶՆ 17 «Հզորացնել գործարկման միջոցները և վերակենդանացնել համաշխարհային գործընկերությունը հանուն կայուն զարգացման»:

- **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել վերոնշյալ բոլոր թեմաներին՝ ելույթներով և զեկույցներով են հանդես եկել ՄԱԿ-ի տարբեր կառույցների ու Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի երկրների պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչները:

Որպես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև Կանանց հարցերով խորհրդի ներկայացուցիչ՝ զեկույցով հանդես եմ եկել ԿԶՆ 5 «Հասնել գենդերային հավասարությանը և հզորացնել բոլոր կանանց և աղջիկներին» քննարկմանը: Ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության երաշխավորմանը, գենդերային խզվածքի հաղթահարմանն ու կանանց և աղջիկների տնտեսական հզորացմանն ու պաշտպանությանը միտված քաղաքականությունների, ռազմավարական ծրագրերի ու միջոցառումների համատեքստը, գրանցած արդյունքներն ու առկա ռազմավարությունները, անդրադարձ եմ կատարել Կառավարության որդեգրած մոտեցումներին, որոնք համահունչ են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների օրակարգին:

Խոսելով Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության քաղաքականության իրականացման շրջանակի մասին՝ կարևորել և հանդիպման մասնակիցներին ներկայացրել եմ հետևյալ առանցքային կետերը՝

- Հայաստանի Հանարապետությունում գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմ՝ հիմնական կառուցվածք և գործառույթներ,

- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կանանց կանանց և աղջիկների տնտեսական հզորացմանը միտված ծրագրեր ու միջոցառումներ,

- Հայստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թթ. ռազմավարական ծրագիր՝ ռազմավարական

ծրագրի հիմնական ուղղությունները, սահմանված նպատակներն ու առաջադրված խնդիրները,

- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության և աջակցության մեխանիզմներ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրեր, պաշտպանության և աջակցության հարակից գործիքներ,

- Որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցայնություն ու ներկայացվածություն՝ Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում առկա ցուցանիշներ,

- Միջազգային համագործակցություն:

Համաժողովի ընթացքում քննարկում եմ ունեցել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրենի տեղակալ Կլաուս Բեքի հետ: Վերջինիս ներկայացրել եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության միջև առկա համագործակցության հիմնական շրջանակն ու ուղղությունները՝ անդրադարձ կատարելով հատապես գենդերային հավասարությանը, ընտանեկան բռնության դեմ պայքարին և կանխարգելմանը, իրավական դաշտի լավարկմանն ու տվյալների հավաքագրման մեխանիզմների բարելավմանն առնչվող հարցերին, կարևորել եմ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համագործակցության արդյունքում Հայաստանի Հանրապետությունում Ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համակարգի ստեղծման և գործարկման հանգամանքը:

Իր ելույթի ընթացքում վերջինս անդրադարձ կատարեց տարածաշրջանային երկրների կողմից կատարված և կատարվող աշխատանքներին՝ մատնանշելով Հայաստանի Հանրապետության կողմից Ժողովրդագրության ռազմավարության մշակումը՝ որպես կարևոր և արդյունավետ քայլ:

Մտքերի փոխանակում է տեղի ունեցել նաև ՄԱԿ-Կանայք կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրենի տեղակալ Էլիզա Ֆերնանդես Սաեզի հետ, անդրադարձ ենք կատարել Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-Կանայք կառույցի կողմից գենդերային հավասարության

ոլորտում կատարվող աշխատանքներին, համագործակցության հիմնական ուղղություններին, կարևորել եմ ներկայացուցչության մարդկային և նյութական առավել մեծ ռեսուրսների առկայությունը: Վերջինս նշել է, որ հաջորդ տարի պլանավորում է տարածաշրջանային այցելություն, որը կարող է ներառել նաև Հայաստանը: Իր ելույթում Էլիզա Ֆերնանդես Սաեզն անդրադարձել է հատկապես որոշումների կայացման գործընթացում Հայաստանի Հանրապետության կողմից գրանցած առաջընթացին՝ խոսելով Ազգային ժողովում կանանց 36% ներկայացվածության մասին:

Քննարկում եմ ունեցել Ղրղզստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող Գյուղաբնակ կանանց ասոցացիա «ALGA»-ի գործադիր տնօրենի հետ: Վերջինս իր պատրաստակամությունն է հայտնել համագործակցելու և փորձի փոխանակմանը միտված աշխատանքների իրականացման մեկնարկի համար:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել

- **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

➢ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը և ՄԱԿ-Կանայք կազմակերպությունը համատեղ մեկնարկում են տվյալների հավաքագրման մեխանիզմների ու գործիքների լավարկմանն ու բարելավմանն ուղղված ծրագիր, ուստի առաջարկում եմ սկսել համապատասխան գործընթացներ նշյալ ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության ձեռքբերման և ծրագրում Հայաստանի ներառման ու մասնակցության ապահովման ուղղությամբ,

➢ Հաստատել կապեր և մշակել համագործակցության մեխանիզմներ Ղրղզստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող Գյուղաբնակ կանանց ասոցացիա «ALGA»-ի հետ,

➢ Հաշվի առնելով, որ Կայուն զարգացման նպատակների իրականացման Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի բազմակողմ ֆորումն ամենամյա է՝

սկսել համապատասխան աշխատանքներ հաջորդ տարի ֆորումին Հայաստանի Հանրապետությունում գործող ոլորտային (հատկապես՝ գենդերային հավասարություն, ընտանեկան բռնություն) հասարակական կազմակերպություններին և քաղհասարակության ներկայացուցիչներին մասնակցության հնարավորություն տալու համար:

- **Ստորագրությունը, ամսաթիվը:** 16.10.2024թ.

Արմինե Ալավերդյան՝